



Գերմանական  
համագործակցություն  
DEUTSCHE ZUSAMMENARBEIT



**ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍ ԴԵՊԻ ԼՈՒՍԱՎՈՐ ԵՎ ԿԱՆԱԶ ԱՊԱԳԱ**

**Ներածություն**

Կայուն էներգիայի մեր ուսումնասիրությունը եկեք սկսենք դիտարկելով վերականգնվող ռեսուրսների բազմազանությունը, ինչպիսիք են հիդրոէներգիան և հողմային էներգիան: Բնության ուժերից ստացված այս էներգիաները կարող են արմատապես փոխել մեր ապրելակերպը: Այսօր, սակայն, մենք կենտրոնանում ենք արևային էներգիայի հետաքրքիր հեռանկարների վրա: Մենք ուրախ ենք Ձեզ ներկայացնել արևային էներգիայի աշխարհը, որը բացառիկ հնարավորություններ է ընձեռում Հայաստանում միկրո/փոքր ձեռնարկությունների և կանանց կողմից ղեկավարվող տնային տնտեսությունների զարգացման համար:

Արևը՝ մեր մշտական ուղեկիցը, կարող է շատ ավելին անել, քան լուսավորել մեր օրերը: Այն կարող է լուսավորել մեր տները, հզորացնել մեր բիզնեսները և ճանապարհի հարթել դեպի կայուն, էկոլոգիապես մաքուր ապագա: Արևային ֆոտովոլտային (ՖՎ) տեխնոլոգիան արևի էներգիան վերածում է էլեկտրաէներգիայի և հասանելի դարձնում այն Ձեզ համար:

Այս նախաձեռնության կենտրոնում Դուք եք՝ Հայաստանում տնային տնտեսություններ և փոքր բիզնեսներ վարող կանայք: Մենք հավատում ենք ոչ միայն Ձեր, այլև Ձեր ընտանիքների, համայնքների և մեր գեղեցիկ մոլորակի համար փոփոխություններ կատարելու Ձեր կարողությանը: Օգտագործելով արևային ֆոտովոլտային համակարգեր՝ Դուք կարող եք վերահսկել Ձեր էներգետիկ կարիքները, խնայել գումար և նպաստել ավելի մաքուր միջավայրի:

Այս գրքույկում մենք Ձեզ կներկայացնենք արևային էներգիայի հետաքրքիր աշխարհը՝ ընդգծելով առաջարկվող վարկավորման մեխանիզմների ֆինանսական և տեխնիկական առավելությունները, որոնք Ձեզ հասանելի են դարձնում էներգիայի այս կայուն աղբյուրը: Մենք Ձեզ կտրամադրենք մանրամասն պատկերացում, թե ինչպես են գործում արևային համակարգերը, կբացատրենք դրանց բազմաթիվ առավելությունները և կուղեկցենք արևային ՖՎ համակարգերի տեղադրման համար վարկ ստանալու գործընթացին:

**«Կանաչ» վարկային ծրագիր (Վերականգնվող էներգիայի զարգացման ԳՀՀ ծրագիր – ԳՀՀ-ՎԷ)**

Հայաստանի Կենտրոնական բանկը (ՀՀ ԿԲ) և Գերմանական զարգացման բանկը (KfW<sup>1</sup>) կնքել են համաձայնագիր Հայաստանում վերականգնվող էներգետիկայի զարգացման ուղղությամբ մասնավորապես՝ ընդլայնելով վարկերի հասանելիությունը մասնավոր տնային տնտեսությունների, փոքր բիզնեսի և վերականգնվող էներգիայի մեջ ներդրումներ կատարող ներդրողների համար:

<sup>1</sup> KfW-ն աշխատում է Գերմանիայի կառավարության անունից

Ծրագիրը իրականացվում է ՀՀ ԿԲ «Գերմանահայկական հիմնադրամ» ծրագրերի կառավարման գրասենյակի (ԳՀՀ ԾԿԳ) կողմից՝ ծրագրի տեխնիկական խորհրդատու՝ Ֆիխթներ (Fichtner GmbH & Co. KG) գերմանական ընկերության աջակցությամբ:

Ծրագրի նախորդ փուլերի ֆինանսավորումը ներառում էր փոքր հիդրոէլեկտրակայանների (ՓՀԷԿ), հողմային էլեկտրակայանների (ՀԷԿ) և արևային էլեկտրակայանների (ԱԷԿ) կառուցման ծրագրեր: Ներկա փուլում հիմնական շեշտը դրված է հողմակայանի և արևային էլեկտրակայանների ծրագրերի վրա: Ծրագրի առանցքային նպատակներից է մասնավոր ձեռնարկություններին և տնային տնտեսություններին վարկեր տրամադրել մինչև 500 կՎտ հզորությամբ արևային ՖՎ էլեկտրակայանների կառուցման համար:

Կանաչ վարկերի պայմանները ներկայացված են ստորև.

<b>Անվանում</b>	<b>Տեղեկություն</b>
<b>Վարկի նպատակը</b>	Կանաչ ներդրումներ (վերականգնվող էներգիայի ներդրումներ)
<b>Արժույթը</b>	ՀՀ դրամ
<b>Կանաչ վարկի գումարը</b>	Մինչև 80 մլն ՀՀ դրամ մինչև 150 կՎտ հզորությամբ ֆոտովոլտային կայանների համար, և մինչև 200 մլն ՀՀ դրամից 150-500 կՎտ հզորությամբ ֆոտովոլտային կայանների համար
<b>Վարկի ժամկետը</b>	≤ 120 ամիս
<b>Տոկոսադրույքը</b>	Սահմանված է գործընկեր ֆինանսական հաստատությունների (ԳՖՀ) կողմից:
<b>Գրավի վերաբերյալ պահանջներ</b>	Արևային էլեկտրակայանը ինքնին հանդես է գալիս որպես երաշխիք

**80/20 կանոն**

150-500 կՎտ հզորությամբ ՖՎ կայանների համար վարկի գումարը չի կարող գերազանցել ծրագրի ընդհանուր արժեքի 80%: Կանաչ վարկի 100%-ը պետք է օգտագործվի մեքենա-սարքավորումների, այլ ապրանքների կամ ծառայությունների ձեռքբերման և կանաչ ներդրումներին առնչվող ծախսերի համար: Թույլատրելի առնչվող ծառայությունները և ծախսերը կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

- տեղադրման ծախսեր (ներառյալ՝ նախապատրաստական ծախսեր)
- անհրաժեշտ լրացուցիչ սարքավորումների ձեռքբերման ծախսեր, որոնք ուղղակիորեն կապված են ներդրումների հետ
- տեխնիկական իրագործելիության ստուգման ծախսեր
- աշխատանքային ծախսեր, որոնք ուղղակիորեն կապված են ներդրումների հետ:

Մեր վեբկայքով (<http://re.gaf.am>) Ձեզ հնարավորություն ենք ընձեռնում տեղեկություններ ստանալ ԳՀՀ-ՎԷ ծրագրի մասին:


Ֆինանսավորմանը դիմելու և 150 կՎտ-ից ավելի հզորությամբ ծրագրերի հայտի ընթացակարգի և իրավասության չափանիշների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք այցելել Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի վեբ կայքը ([www.r2e2.am](http://www.r2e2.am)): Լրացրեք վարկի հայտը՝ տրամադրելով անհրաժեշտ փաստաթղթերը:

Մեր թիմը անմիջապես կուսումնասիրի Ձեր դիմումը: Մինչև 150 կՎտ հզորությամբ ծրագրերը հաստատվում են ԳՀՀ-ի կողմից՝ հայտի պարզեցված գործընթացով:

**Ինչպե՞ս է աշխատում արևային ՖՎ տեխնոլոգիան:**

Արևային ՖՎ տեխնոլոգիան առատ արևի լույսը վերածում է մաքուր, հուսալի էլեկտրաէներգիայի Ձեր տան կամ բիզնեսի համար: Բացահայտենք այս գործընթացի էությունը:

Ամեն ինչ սկսվում է արևային վահանակներից, որոնք կազմված են ֆոտովոլտային բջիջներից: Այս բջիջները նախատեսված են արևի լույսը կլանելու համար և սովորաբար տեղադրվում են տանիքներին, բաց դաշտերում կամ այլ արևոտ վայրերում: Արեգակի ճառագայթներից ստացվող էներգիան գրգռում է էլեկտրոնները ֆոտովոլտային բջիջների ներսում: Այս գրգռումը հանգեցնում է էլեկտրական հոսանքի ստեղծմանը: Առաջացող էլեկտրական հոսանքը կոչվում է հաստատուն հոսանք (<<), որը նման է մարտկոցներում կուտակվող էլեկտրականությանը:



Արևային վահանակների կողմից առաջացած << էլեկտրաէներգիայի այն տեսակը չէ, որը կարող է օգտագործվել տանը կամ ձեռնարկություններում: Հենց այստեղ է ի հայտ գալիս ինվերտորը: Ինվերտորը փոխակերպում է հաստատուն հոսանքը փոփոխական հոսանքի (ՓՀ), որն արդեն կարող է օգտագործվել կենցաղային տեխնիկայի, լուսավորության և այլ համակարգերի սնուցման համար:

Երբ արևային ՖՎ համակարգը փոխակերպում է էլեկտրաէներգիան փոփոխական հոսանքի, այն պատրաստ է սնուցել Ձեր տունը կամ ձեռնարկությունը: Արտադրված էլեկտրաէներգիայի ավելցուկը կարող է վերադարձվել էլեկտրացանց՝ ապահովելով եկամուտ: Սա նշանակում է, որ Դուք կարող եք խնայել էներգասպառման ծախսերը և նույնիսկ լրացուցիչ եկամուտ ստանալ՝ ավելի շատ էներգիա արտադրելով, քան սպառում եք: Արևային վահանակները հրաշքներ են գործում օրվա ընթացքում, երբ արևը ամենապայծառ է շողում: Բայց մի անհանգստացեք գիշերային ժամերի համար. դուք դեռ կարող եք էլեկտրականություն օգտագործել էլեկտրական ցանցից, ինչպես միշտ:

**Ջուտ հաշվառման (net-metering) առավելությունները (ինքնավար էներգիայի արտադրություն)**

Անհատները և ձեռնարկությունները կարող են տեղադրել մինչև 150 կՎտ հզորությամբ արևային էլեկտրակայաններ, արտադրել էլեկտրաէներգիա իրենց սեփական սպառման համար և ավելցուկը վաճառել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերությանը:

2023թ. օգոստոսի 1-ի դրությամբ ՀԷՑ-ին միացված են 13909 ինքնավար արտադրող արևային կայաններ 236898,040 կՎտ հզորությամբ և ընթացքում են 384-ը՝ 10529,760

կՎտ ընդհանուր հզորությամբ<sup>2</sup>: Ակնկալվում է, որ 247,427,8 կՎտ դրվածքային հզորությամբ ֆոտովոլտային համակարգերը տարեկան կարտադրեն մոտավորապես 371,141,700 կՎտ/ժ էլեկտրաէներգիա: Ըստ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ) տվյալների՝ յուրաքանչյուր տնային տնտեսությունը ամսական սպառում է միջինը 200 կՎտ/ժամ էլեկտրաէներգիա՝ ձմռանը՝ 325 կՎտ/ժամ, ամռանը՝ 180 կՎտ/ժամ: Հաշվի առնելով մեկ տնային տնտեսության էլեկտրաէներգիայի միջին պահանջարկը, ինքնավար գեներատորների արտադրած էլեկտրաէներգիան կարող է բավարարել մոտ 155,000 տնային տնտեսությունների էլեկտրաէներգիայի կարիքները:

Ինքնավար էներգիայի արտադրությունը Net-Metering սխեմայի միջոցով ապահովում է հետևյալ տարբերակները ինքնավար էլեկտրաէներգիա արտադրողների համար.

- 2022 թվականի մայիսի 1-ից ինքնավար էլեկտրակայանների դրվածքային հզորությունը չի կարող գերազանցել 150 կՎտ-ը ինչպես ձեռնարկությունների, այնպես էլ ֆիզիկական անձանց համար: Նախկինում ձեռնարկությունների համար այն կազմում էր 500 կՎտ, իսկ ֆիզիկական անձանց համար՝ 150 կՎտ:
- Ինքնավար էներգիա արտադրողների հոսքերի իրականացման գործող մեխանիզմները բարելավվել են 2022 թվականի մայիսից՝ թույլ տալով նրանց արտադրել, սպառել էլեկտրաէներգիայի տարբեր հաշվառման կետերում և ստեղծել խմբեր, որոնք ներառում են բնակիչներ և կազմակերպություններ:
- Ինքնավար խմբի դեպքում (ինքնավար էներգիա արտադրողների խումբ՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձինք), խմբում ընդգրկված ինքնավար էներգաարտադրողների ընդհանուր դրվածքային հզորությունը չի կարող գերազանցել 1050 կՎտ-ը:

Ֆոտովոլտային էլեկտրակայանի տեղադրման ետզնման ժամկետը ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

Հզորությունը	Արժեքը 1 կՎտ-ի համար	Ընդհանուր արժեքը	Երզնման ժամկետը
Մինչև (կՎտ)	(ՀՀ դրամ)	(ՀՀ դրամ)	(տարի)
5	330,000	1,650,000	4-5
10	290,000	2,900,000	3.5 - 4.5
50	270,000	13,500,000	3 - 5.5
150	260,000	39,000,000	3 - 4.5

**Օրինակ.** Ակնկալվում է, որ 25 կՎտ հզորությամբ արևային էլեկտրակայանը տարեկան կարտադրի մոտավորապես 37,500 կՎտ/ժ էլեկտրաէներգիա՝ նվազեցնելով ջերմոցային գազերի արտանետումները մթնոլորտ մոտ 15.7 տոննայով CO<sub>2</sub> և նվազեցնելով էլեկտրաէներգիայի տարեկան վճարները մոտավորապես 1,800,000 դրամով:

*Ֆինանսական հաշվիչից օգտվելու համար այցելեք հետևյալ հղումով.*

<https://www.abcfinance.am/>

<sup>2</sup> <https://energyagency.am/en/category/infografiks/inqnavar-arevayin-kayanner-2023t--houlisi>

## Արևային ՖՎ համակարգերի առավելությունները

Օգտագործելով արևային ՖՎ տեխնոլոգիան՝ Դուք ոչ միայն նպաստում եք ավելի կանաչ մոլորակի ձևավորմանը, այլև բացում եք բազմաթիվ ֆինանսական և գործնական առավելություններ: Եկեք ուսումնասիրենք արևային էներգիային անցնելու բազմաթիվ առավելությունները:

- ❖ Էլեկտրաէներգիայի վճարների զգալի խնայողություն. Պարկերացրեք, թե ինչպես կարող եք զգալիորեն նվազեցնել կամ նույնիսկ վերացնել Ձեր ամսական էլեկտրաէներգիայի վճարումները: Արևային ՖՎ համակարգերը էլեկտրաէներգիա են արտադրում արևի լույսից, ինչը նշանակում է, որ դուք ավելի քիչ էներգիա կսպառեք էլեկտրացանցից: Ժամանակի ընթացքում խնայողությունները կարող են զգալի լինել, ինչը թույլ է տալիս օգտագործել ձեր դժվարությամբ վաստակած գումարը այլ կարևոր կարիքների համար:
- ❖ Սպեղծեք եկամուտ ավելորդ էներգիայի միջոցով. ՖՎ համակարգերը հաճախ ավելի շատ էլեկտրաէներգիա են արտադրում, քան Ձեր տնային տնտեսությունը կամ բիզնեսը կարող են օգտագործել արևոտ օրերին: Ավելորդ էներգիան կարող է վերադարձվել էլեկտրացանց, որի դիմաց Դուք կստանաք վճարումներ: Դուք կարող եք Ձեր տանիքը կամ բացօթյա տարածքը վերածել փոքր եկամտաբեր էլեկտրակայանի:
- ❖ Գույքի արժեքի բարձրացում. ՖՎ համակարգի տեղադրումը կարող է բարձրացնել Ձեր բնակելի տան կամ կոմերցիոն գույքի արժեքը: Պոպուլյար գնորդներն ավելի ու ավելի են հետաքրքրվում էկոլոգիապես մաքուր հատկանիշներով, և ՖՎ համակարգը ցույց է տալիս Ձեր նվիրվածությունը կայունությանը: Սա կարող է Ձեր գույքն ավելի գրավիչ դարձնել անշարժ գույքի շուկայում:
- ❖ Հուսալիություն և ցածր սպասարկում. ՖՎ համակարգերը հայտնի են իրենց հուսալիությամբ: Քիչ շարժվող մասերով և վառելիքի կարիք չունենալով՝ դրանք նվազագույն սպասարկում են պահանջում: Կանոնավոր մաքրումը և պարբերական սրուգումները սովորաբար բավարար են, որպեսզի Ձեր համակարգը արդյունավետ աշխատի տասնամյակներ շարունակ:
- ❖ Էներգետիկ անկախություն. Արևի օգտագործումը. էլեկտրաէներգիա արտադրելու համար նշանակում է որ Դուք դառնում եք ավելի քիչ կախված էներգիայի արտաքին աղբյուրներից: Սա կարող է հատկապես արժեքավոր լինել հոսանքի անջատումների կամ էներգիայի տատանվող գների ժամանակ՝ ապահովելով Ձեզ էներգիայի կայուն և հեղուկական աղբյուր:
- ❖ Նվազեցրեք ձեր ածխածնի հետքը. Արևից մաքուր և վերականգնվող էներգիա արտադրելով՝ Դուք օգնում եք նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները: Արևային ֆոտովոլտային համակարգերն օգնում են պայքարել կլիմայի փոփոխության դեմ՝ նվազեցնելով ածխածնի հետքը: Սա ապագա սերունդների համար շրջակա միջավայրը պաշտպանելու արդյունավետ միջոց է:
- ❖ Երկարաժամկետ ներդրում. Ձեր արևային ՖՎ համակարգը համարեք ներդրում Ձեր ապագայում: Չնայած սկզբնական ծախսերին, երկարաժամկետ ֆինանսական օգուտները, ներառյալ խնայված էներգիայի հաշիվները և հնարավոր եկամուտների սպեղծումը, կարող են գերազանցել ներդրումները՝ ժամանակի ընթացքում ապահովելով դրական վերադարձ:

Արևային ֆոտովոլտային համակարգերի ներդրումը Ձեր տանը կամ բիզնեսում ոչ միայն խելացի ֆինանսական որոշում է. դա կայուն ընտրություն է, որն օգուտ է բերում շրջակա միջավայրին և ապագա սերունդներին: Դա լավ է ինչպես Ձեր դրամապանակի, այնպես էլ մոլորակի համար:

## Հաջողության պատմություններ

### Հաջողության պատմություն 1 – Անուշ Սաֆարյան (տնային տնտեսություն).

Գեղարքունիքի մարզի Լուսակունք գյուղ, տանիքի վրա տեղադրված արևային էլեկտրակայան՝ 3,3 կՎտ հզորությամբ, 1,4 մլն ՀՀ դրամ ընդհանուր գումարով, տոկոսադրույքը՝ 9,5%, վարկի ժամկետը՝ 6 տարի:

Վերջնական շահառուն շատ գոհ է վարկից և հեշտությամբ վճարումներ է կատարում առանց ուշացումների: Արևային էլեկտրակայանի շնորհիվ վերջնական շահառուն ամսական խնայում է մոտավորապես 10000 ՀՀ դրամ (էլեկտրաէներգիայի վճարում չկա): Մեկ տարի աշխատելուց հետո «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերությունից հետ է ստացել 50000 դրամ:



### Հաջողության պատմություն 2 – «Մաստեր Ֆարմ» ՍՊԸ, բժշկական կենտրոն (կանանց պատկանող բիզնես):

Արարատի մարզի Վաղարշապատ քաղաք, տանիքի վրա տեղադրված արևային էլեկտրակայան՝ 15,4 կՎտ հզորությամբ, 6 մլն ՀՀ դրամ ընդհանուր գումարով, տոկոսադրույքը՝ 8,5%, վարկի ժամկետը՝ 7 տարի:

Ընկերությունը բավականին գոհ է վարկից և վճարումները կատարում է առանց ուշացման: Արևային էլեկտրակայանի շնորհիվ վերջնական շահառուն ամսական խնայում է մոտավորապես 34% (Տարեկան էլեկտրաէներգիայի ծախսերը մինչև արևային էլեկտրակայանի տեղադրումը կազմում էին 3,3 մլն դրամ, արևային էլեկտրակայանի տեղադրումից հետո ծախսերը նվազել են մինչև 2,2 մլն դրամ, ինչը հանգեցրել է խնայողության՝ 1,1 մլն դրամ):





### **Հաճախակի տրվող հարցեր (ՀՏՀ)**

Մենք հասկանում ենք, որ Դուք կարող եք ունենալ որոշ հարցեր արևային ֆոտովոլտային (ՖՎ) համակարգերի և վարկային ծրագրի վերաբերյալ: Ահա ամենաշատ տրվող հարցերի պատասխանները:

#### **Հ1: Որքա՞ն արժե արևային ֆոտովոլտային համակարգը:**

Պ1. Արևային ՖՎ-ի արժեքը կարող է տարբեր լինել՝ կախված այնպիսի գործոններից, ինչպիսիք են համակարգի չափը, բաղադրիչի որակը և տեղադրման ծախսերը (միջին շուկայական գները ներկայացված են վերևի աղյուսակում): Այնուամենայնիվ, կարևոր է հաշվի առնել երկարաժամկետ խնայողությունները և պոտենցիալ եկամուտները, որոնք առաջանում են ավելորդ էներգիայի արտադրությունից:

#### **Հ2. Որո՞նք են արևային ՖՎ էլեկտրակայանի տեղադրման հիմնական նախադրյալները:**

Պ2. Արևային ֆոտովոլտային (ՖՎ) կայանի հաջող տեղադրումը կախված է էներգացանցի հուսալի կապի ապահովումից և չստվերված տանիքի օպտիմալ տեղադիրքով տեղանքի ընտրությունից: Արևային ռեսուրսների մանրակրկիտ գնահատումը, գոտիավորման համապատասխանությունը և կառուցվածքային համապատասխանությունը հիմնարար նախադրյալներ են՝ ապահովելու տեղադրման արդյունավետությունը, երկարակեցությունը և կանոնակարգային համապատասխանությունը:

#### **Հ3. Ի՞նչ կլինի, եթե տեղափոխվեմ նոր վայր:**

Պ3. Եթե Դուք տեղափոխվում եք նոր վայր, կարող եք կամ վերցնել Ձեր արևային ֆոտովոլտային (ՖՎ) համակարգը ձեզ հետ կամ փոխանցել ՖՎ համակարգից ստացած շահերը նոր գույքի սեփականատիրոջը: Արևային ֆոտովոլտային համակարգերը կարող են բարձրացնել Ձեր գույքի շուկայական արժեքը՝ այն գրավիչ դարձնելով պոտենցիալ գնորդների համար:

**Հ4. Դժվա՞ր է պահպանել արևային ՖՎ համակարգը:**

Պ4. Արևային ՖՎ համակարգերը նախագծված են նվազագույն սպասարկման համար: Վահանակների սովորական մաքրումը փոշին և բեկորները հեռացնելու համար և պատշաճ շահագործումն ապահովելու համար պարբերական ստուգումները սովորաբար այն ամենն են, ինչ պահանջվում է: Համակարգերի մեծ մասը երաշխիքներ ունի՝ գնորդներին որակի և հուսալիության նկատմամբ վստահություն ապահովելու համար:

**Հ5. Ես էլեկտրականություն կունենա՞մ գիշերը, կամ ամպամած օրերին:**

Պ5. Արևային վահանակները էլեկտրաէներգիա են արտադրում օրվա ընթացքում, երբ արևը շողում է: Այնուամենայնիվ, գիշերը կամ ամպամած օրերին Դուք դեռ հոսանք կունենաք, քանի որ Ձեր համակարգը միացված կլինի էլեկտրացանցին: Դուք կշարունակեք էներգիա ստանալ սովորականի պես, և արևային ժամանակաշրջաններում արտադրված ցանկացած ավելորդ էներգիա կարող է հետ վերադարձվել էլեկտրացանց, որի դիմաց Դուք կստանաք վճարումներ տարվա վերջում:

**Հ6. Իսկ եթե ես չկարողանամ ինձ թույլ տալ արևային ֆոտովոլտային համակարգի նախնական ծախսերը:**

Պ6. Կանաչ վարկային ծրագիրը առաջարկում է վարկեր արևային ֆոտովոլտային համակարգերի համար՝ ճկուն պայմաններով և մրցունակ տոկոսադրույքներով: Այս վարկերը նախատեսված են արևային էներգիան ավելի մատչելի դարձնելու համար՝ թույլ տալով սկսել խնայել էլեկտրաէներգիայի վրա և պոտենցիալ եկամուտ ստանալ էներգիայի ավելցուկային արտադրությունից՝ առանց մեծ նախնական ներդրումների:

**Հ7. Արևային ՖՎ համակարգը կկարողանա՞ աշխատել Հայաստանի կլիմայական պայմաններում:**

Պ7. Այո, արևային ՖՎ համակարգերը լավ են աշխատում Հայաստանի կլիմայական պայմաններում, որտեղ տարվա ընթացքում շատ են արևոտ օրերը: Արևային վահանակները կարող են էլեկտրաէներգիա արտադրել նույնիսկ ամպամած օրերին, թեև դրանց արդյունավետությունն ամենաբարձրն է արևի ուղիղ ճառագայթների դեպքում: Պատշաճ տեղադրման և սպասարկման դեպքում Դուք կարող եք օգտագործել արևային էներգիան Ձեր ընտանիքի կամ բիզնեսի օգտին:

Եթե ունեք լրացուցիչ հարցեր կամ լրացուցիչ տեղեկությունների կարիք ունեք, ապա կարող եք դիմել ֆինանսական հաստատություններին կամ կազմակերպություններին, որոնք առաջարկում են արևային ՖՎ վարկեր: Այս կազմակերպությունները նաև պատրաստ են օգնել ձեզ դեպի արևային էներգիա ձեր ճանապարհին:

**Համապատասխանություն և դիմումի գործընթացը**

**Տեղադրված հզորությունը մինչև 149 կՎտ.** կգնահատվի և կֆինանսավորվի անմիջապես բանկի/ԳՀՀ-ի կողմից:

Իրավասու ընկերություններ.

- մասնավոր, գրանցված և գործող Հայաստանում,
- գործում է շրջակա միջավայրի, առողջության և անվտանգության ազգային օրենսդրության համաձայն:



Բացի այդ, ծրագրով ֆինանսավորման համար դիմող մասնավոր ձեռնարկությունները պետք է համապատասխանեն հետևյալ ընդհանուր չափանիշներին.

- գոյություն ունեցող բիզնեսների համար. ապացուցված փորձառություն և անբասիր վարկային պատմության, ներառյալ ֆինանսական հաշվետվությունները՝ տեղական հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան
- էներգետիկ սկսնակ ձեռնարկությունների համար. գնահատումը հիմնված կլինի սովորական տեխնիկական և շուկայական պատշաճ ուսումնասիրության, ինչպես նաև բավարար ֆինանսական կանխատեսումների վրա,
- կայուն կառավարման համակարգ և կազմակերպչական կառուցվածք,
- կայուն ֆինանսական կառուցվածք, ներառյալ առաջարկվող վարկառուի համար բավարար գրավի փաթեթ:

**Տեղադրված հզորություն 150-500 կՎտ.** Արևային ֆոտովոլտային էլեկտրակայանների տեխնիկական բնութագրերը և առաջարկները կստուգվեն Ծրագրի խորհրդատու Fichtner GmbH & Co" KG ընկերության և նրա ենթակապալառուի՝ Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի (R2E2 Հիմնադրամ) կողմից:

Այս նպատակով Հաճախորդին անհրաժեշտ է R2E2 հիմնադրամ ներկայացնել լրացված [հարցաթերթիկ](#) և փաստաթղթեր նշված [Հավելված 1](#)-ում՝ Սեփական օգտագործման նպատակով հողատարածքի և տանիքի վրա տեղադրվող 150-ից մինչև 500 կՎտ հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) արևային կայանների համար կիրառվող տեխնիկական պահանջները և առաջարկությունները, ինչպես նաև [Հավելված-2](#)-ում՝ Սեփական օգտագործման նպատակով հողատարածքի և տանիքի վրա տեղադրվող մինչև 150 կՎտ հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) արևային կայանների համար կիրառվող տեխնիկական պահանջները և առաջարկությունները:

#### **Կոնտակտային տվյալներ**

ՀՀ, ք.Երևան, 0001, Սայաթ-Նովա պողոտա 29/1

Հեռ.՝ +(374-10) 58 80 11, 54 51 21

Էլ"փոստ՝ info@r2e2.am

URL՝ www.r2e2.am

Ծրագրի վեբ կայք՝ [այստեղ](#)